 Վ. Կարապետյան

Ա Ո Ւ Դ Ի Տ Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31.03.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 25.03.2015թ.-ի թիվ 39 կարգադրությունը, «Աղավնաձորի ԱԱՊԿ» ՓԲԸ-ում անցկացվեց 2014թ.-ի գործունեության ֆինանսական ներքին աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտոր Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՓԲԸ-ի տնօրեն Լ.Հարությունյանը և հաշվապահ՝ Ա.Կոստանյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Գնումների համապատասխանությունը «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներին.

ե/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ունեն արձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ, երկու տարվա ներքին աուդիտորի աշխատանքային փորձ:

«Աղավնաձորի ԱԱՊԿ» Փակ բաժնետիրական ընկերություն՝ գ.Աղավնաձոր: Գործունեության նպատակը՝ բնակչության առողջության առաջնային պահպանում:

Ընկերությունը ստեղծվել է 07.11.2007թ. համաձայն Վայոց ձորի մարզպետի թիվ 97 որոշմամբ, անվանվելով «Աղավնաձորի առողջության առաջնային կենտրոն» ՓԲԸ: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 8.528 հազ. դրամ, որը կազմում է 8 սովորական անվանական բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1.066.000 դրամ: Ընկերությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով իր անվանմամբ կլոր կնիք, բանկային հաշիվ և անհատականացման այլ միջոցներ, ՀՎՀՀ-08909385:

Ստուգվեց հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների կազմման համապատասխանությունը հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին: Հաշվապահական հաշվառումը վարվում է գլխավոր հաշվապահի կողմից, գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման տվյալների հիման վրա: Դրամարկղի գիրք կազմակերպությունում չի վարվել, քանի որ կանխիկ գործարքներ չեն կատարվել:

Ներկայացվել է ՀՀ օրենքներին ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան ֆինանսական, վիճակագրական և հարկային հաշվետվություններ:

Հաստատված է ընկերության հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը, ինչպես նաև դեղորայքի առկա մնացորդը և մատչանում հաշվառված տվյալները: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ԵՄԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին հսկողության համակարգը բժշկական ծառայությունների գծով՝ մասնակի բավարար:

« պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2014թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատեսված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ.ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	11982.9	11982.9	11863.3	11863.3	11837	11837	-145.9
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	11982.9	11874.3	11863.3	11863.3	11837	11837	-145.9
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	10150		10141.3	10141.3	10179.3	10179.3	29.3
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	1832.9		1722	1722	1657.7	1657.7	-175.2
գրասենյակային նյութեր և հագուստ							0
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	71		53	53	53	53	-18
Դեղորայք և լաբորատոր նյութեր	778		777.8	777.8	777.8	777.8	-0.2
Այլ ծախսեր	68						-68
գործառնական և բանկ.ծառ.ծախսեր ներքին							0
գործուղումներ	67		67	67	67	67	0
Կապի ծառայության վճարներ	185		163.2	163.2	162	162	-23
Կոմունալ ծառայությունների վճար	409		398	398	418.2	418.2	9.2
Էլ. էներգիայի ծախսեր	145		134	134	154.2	154.2	9.2
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր							0
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.							0
Այլ ծախսեր	264		264	264	264	264	0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	254.9		263	263	179.7	179.7	-75.2
Բանկի տոկոս							0
տարեսկզբի դրամ. միջոցների ազատ մնաց.		108.6					0
Այլ ծրագրեր							0

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		Էլ. էներգ. ծախսեր.		Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
Սն.01.01.1 ք													0.0	0.0
Շրջանառություն 201 ք.													0.0	0.0
Սն.01.01.14ք.						14.6		18.8				124.2	0.0	157.6
Շրջանառություն 2014ք.	10141.3	10179.3			163.2	162.0	134.0	154.2			1424.8	1341.5	11863.3	11837.0
Սն.01.01.15ք.		38.0				13.4		39.0				40.9	0.0	131.3

Հաշվետվությամբ և աուդիտի տվյալներով առ 01.01.15թ. դրությամբ կրեդիտորական պարտքերը կազմել են 131.3 հազ.դրամ, որից՝ աշխատավարձ՝ 38.0 հազ.դրամ, էլ.էներգիա՝ 39.0 հազ.դրամ, կապի ծառայություն՝ 13.4 հազ.դրամ, <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ին՝ /ուղ. արժեք/ 32.9 հազ.դրամ և այլ 8.0 հազ.դրամ:

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	27998	27998	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	27998	27998	0
արժեքը	27998	27998	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	1845	1845	0
Նյութեր	1725	1725	0
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	0	0	0
արժեքը			0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ. պարտքեր			0
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ. սոց. ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի նետ			0
Հաշվարկներ անձնակազմի նետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ			0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ			0
դրամական միջոցներ, որից	120	120	0
դրամարկը			0
հաշվարկային հաշիվ	120	120	0
Հաշվեկշիռ	29843	29843	0
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից	8605	8605	0
Լրացուցիչ կապիտալ	8528	8528	0
Հաշվետու տար. չօգ. զուտ շահ.	74	74	0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.	3	3	0
Յկամ. վերաբ. շնորհ.	1587	1587	0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	131	131	0
այդ թվում			0
հաշվարկ. մատակ. և կապալ. հետ			0
հաշվարկներ բյուջեի հետ	38	38	0
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ	93	93	0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	19520	19520	0
գալիք ժաման. եկամուտներ	19520	19520	0
Հաշվեկշիռ	29843	29843	0

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

**Ղրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն**

առ. 01.01.2014թ. - առ 01.01.2015թ.

Ձև N 4
հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Ղրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	108.6	108.6	0.0
Գործառնական գործունեությունից Ղրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	11834.0	11834.0	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարծաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	40.3	40.3	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	11874.3	11874.3	0.0
Գործառնական գործունեությունից Ղրամական միջոցների ելքեր				
Չեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090	830.8	830.8	0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100			0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	560.2	560.2	0.0
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	10141.3	10141.3	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Մոռաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170	331.0	331.0	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	11863.3	11863.3	0.0
Գործառնական գործունեությունից զուտ Ղրամական հոսքեր	190	11.0	11.0	0.0
Ղրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		119.6	119.6	0.0

Մեր կողմից Ղրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված Ղրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Կատարվել է ընկերության ֆինանսական գործունեության վերլուծություն 2014թ. հաշվեկշռի տվյալների հիման վրա հետևյալ ցուցանիշների միջոցով.

1. Ֆինանսական անկախության գործակից.

$$q1 = \frac{\text{սեփական կապիտալ}}{\text{հաշվեկշռի հանրագումար}} = \frac{8605}{29843} = 0.3$$

Այն ցույց է տալիս թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այն չի բավարարում այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (0.5):

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից, որը ցույց է տալիս թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություն ունի կազմակերպությունը:

$$q2 = \frac{\text{փոխառու կապիտալ}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{\text{ընթ. պարտավ.} + \text{ոչ ընթ. Պարտավ}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{21238}{8605} = 2.5$$

որը բավարարում է այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (1):

3. Ինքնավարության գործակից, որը ցույց է տալիս, թե ընկերության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին:

$$q3 = \frac{\text{սեփ. կապիտալ} + \text{ոչ ընթ. պարտավ.}}{\text{հաշվեկշռի հանրագումար}} = \frac{28125}{29843} = 0.94$$

2. Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակից.

$$q4 = \frac{\text{սեփ. կապիտալ} + \text{ոչ ընթ. պարտավ} - \text{ոչ ընթ. Ակտիվ}}{\text{ընթացիկ ակտիվներ}} = \frac{127}{1718} = 0.07$$

Այն չի բավարարում նորմատիվային փոքրագույն արժեքին՝ (0.1)

4. Ընթացիկ իրացվելիության գործակից, որը ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը.

$$q5 = \frac{\text{ընթացիկ ակտիվներ}}{\text{ընթացիկ պարտավորություն}} = \frac{1845}{1718} = 1.1$$

Այս ցուցանիշը չի բավարարում սահմանային նվազագույն արժեքին՝ (2):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր ցուցանիշներն են համապատասխանում նորմատիվներին:

Առաջարկվում է. Համապատասխանեցնել 1-ին, 4-րդ և 5-րդ ցուցանիշները սահմանված նորմայի հետ:

Ընկերության հաստիքային միավորների թիվը՝ 11:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը՝ 10 տարվա սկզբին, 10՝ տարվա վերջում: Դրույքների թիվը՝ 10:

Ընդամենը նախատեսված դրամական եկամուտներ՝ 11874.3 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 11874.6 հազ. դրամ:

Որից՝

-պետական պատվերով նախատեսված՝ 11834.1 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 11834.1 հազ. դրամ:

Այլ եկամուտ/օրսֆամ/ նախատեսված 40.2 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 40.2 հազ. դրամ:

Տարվա սկզբի դրամական մնացորդ՝ 108.6 հազ. դրամ:

Տարվա վերջի դրամական մնացորդ՝ 119.6 հազ. դրամ:

01.01.2015թ.-ի դրությամբ ընկերությունը ունի 131 հազ. դրամ կուտակված կրեդիտորական պարտք, որը 11.4 հազ. դրամով ազատ միջոցներով ապահովված չէ: Ընկերությունը աշխատել է 37 հազ. դրամ շահույթով: Ըստ գլոբալ բյուջեի, ընկերության նախատեսված սպասարկման ծավալը կազմել է 2833 բնակիչ, որից՝ մեծահասակներ՝ 2257 բնակիչ, մինչև 18 տարեկան՝ 576 բնակիչ: Տարվա ընթացքում սպասարկման ծավալը փոփոխություններ է կրել: 01.07.2014թ.-ին այն կազմել է համապատասխանաբար՝ 2213 և 609, 01.09.2014թ.-ին՝ 2228 և 614, 01.10.2014թ.-ին՝ 2255 և 624: Նախորդ տարի սպասարկվող բնակչության նախատեսված

սպասարկման ծավալը կազմել է 3046 բնակիչ: Առ 01.012014թ.-ի դրությամբ մշտական բնակչության թիվը կազմում է 3359 բնակիչ, որից Աղավնաձոր համայնքում՝ 2067 բնակիչ, Արփի համայնքում՝ 1292 բնակիչ, որից մինչև 18 տարեկան համապատասխանաբար 492 բնակիչ և 324 բնակիչ:

<<Աղավնաձորի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ում ըստ հաշվետվության, եկամուտների 99.7 տոկոսը ձևավորվել է նեոտական պատվերի շրջանակներում: Ծախսումներում աշխատավարձի և նրան հավասարեցված ծախսումների տեսակարար կշիռը կազմում է 86 տոկոս, դեղորայք և լաբորատոր նյութեր հոդվածով 6.6 տոկոս, այլ ծախսերը՝ 7.4 տոկոս: Աշխատավարձի տեսակարար կշիռը բարձր է, որը հնարավորություն չի տալիս ընկերությանը ապահովել համապատասխան մակարդակի շահութաբերություն:

Իրականացվել է դեղորայքի և վիրակապական նյութերի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ և կատարողականի աուդիտ:

Համապատասխանության աուդիտ: Գնման գործընթացը ներառում է գնումների պլանավորումը, գնումների նախապատրաստումը, պայմանագրի կնքումը: Առկա է գնումների պլանը, որը սահմանված կարգով կազմվել է և ներկայացվել <<Վայոց ձորի մարզպետարան:

Գնումների նախապատրաստում:

Սահմանվել է գնումները իրականացնել ՇՀ գնման ընթացակարգով: Գնումների նախապատրաստման համար մարմնի ղեկավարը սահմանել է գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով: Գնումներին մասնակցելու հայտ են ներկայացրել <<Նատալի Ֆարմ>>ՍՊԸ-ն և <<Վազա Ֆարմ>>ՍՊԸ-ն, որոնք սահմանված կարգով գնային

առաջարկ են ներկայացրել: Հայտերի բացման օրը և ժամին հայտը բացվել է հանձնաժողովի նիստում:

Հանձնաժողովը արձանագրել է նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները, կազմելով համապատասխան արձանագրություն: Ըստ չափաբաժինների հաղթող ընկերություններին ուղարկվել է համապատասխան գրություն հաղթող ճանաչվելու մասին պայմանագիր կնքելու համար, կցելով պայմանագրի նախագիծը, միակողմանի տուժանքի պայմանագրի առկայության պայմաններում: Երկու ընկերությունների կողմից ներկայացվել է տուժանքի պայմանագիր, որի առկայության պայմաններում կնքվել է համապատասխան գնման պայմանագրեր:

Կատարողականի աուդիտ:

Գնումներ իրականացնելու համար կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր:

<<Նատալի Ֆարմ>> ընկերության հետ կնքվել է 654.3 հազ.դրամի գնման պայմանագիր, <<Վազա Ֆարմ>> ընկերության հետ՝ 369.0 հազ.դրամի պայմանագիր:

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանս, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանս և Հ.Ավետիսյանս իրականացրինք <<Աղավնաձորի ԱԱՊԿ>> Փակ բաժնետիրական ընկերության 2014թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2015թ. դրությամբ:

Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորենք և իրականացնենք, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խնդրաբանություններից զերծ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն: Ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ձևով ֆինանսական հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Արձանագրված թերություններ և խախտումներ: Աուդիտի է ենթարկվել պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների արժանահավատությունը: Համադրվել է առկա

գրանցված բնակիչների ցուցակը և ամբուլատոր բժշկական քարտերի քանակությունը, այսուհետև քարտ
Համադրման արդյունքում պարզվեց, որ հաշվառված 3359 բնակչի քարտի դիմաց առկա է 2409 քարտ, որը
մեծահասակների՝ 1765 քարտ, մինչև 18 տարեկաններ՝ 612 քարտ: Առկա է կամ չի հաշվառվել 950 բնակիչ:
Գլոբալ բյուջեով Պետական պատվերի շրջանակներում ընտանեկան բժշկական ծառայության համար
փաստացի կատարողական է ներկայացվել 01.01.2014թ.-ից մինչև 01.07.2014թ.-ն ընկած
ժամանակաշրջանում 2833 բնակչի համար, հուլիս-օգոստոս ամիսների համար՝ 2213 բնակչի համար,
սեպտեմբեր ամսվա համար 2228 բնակչի համար, հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար՝ 2255 բնակչի
համար: Վեց ամիսների ընթացքում 424 բնակչի հաշվով հաշվետվություններով ավել բժշկական սպասարկում է
ցույց տրվել, որը կազմում է միջինը 1142.1 հազ. դրամ:

Կատարեցինք մեծահասակների բժշկական ծառայությունների փաստացի ընտրանքի համադրում:
Պարզեցինք, որ 69 ընտրանքում 12 քարտում առկա է սկրինինգի գրանցում, որի արդյունքում միջինը 210
բնակչի հաշվով ընտանեկան բժշկական ծառայություն չի իրականացվել միջինը 66.5 հազ. դրամ գումարի
չափով: 4 հարցման արդյունքներով, պարզեցինք, որ անվճար տրված դեղորայքից օգտված բնակիչներից 1
բնակիչ ցանկություն չհայտնեց պատասխանելու դեղորայք ստանալու մասին մեր հարցադրմանը, 2 բնակիչ
պատասխանեց ակնհայտորեն նշելով պակաս ստացված դեղորայքի մասին, 1 բնակիչ չկարողացավ
պատասխանել, թե ինչ դեղորայք է ստացել և ինչքան: 2015թ.-ի դրությամբ Արփի համայնքում բնակչության
սպասարկման ցուցակում ներառված է 410 բնակիչ, սակայն փաստացի առկա է 652 ամբուլատոր քարտ: 242
բնակիչ, ում համար լրացվել է քարտ, ընկերության բնակիչների հաշվառման ցանկում չի ներառվել: Նախորդ
աուդիտի հաշվետվությամբ առաջարկվել է ապահովել հաշվառված բնակիչների քարտերի
առկայություն, տարեկան մեկ անգամ կատարել սկրինինգ, որն ամբողջ ծավալով չի կատարվել:

Ֆգրակացություն: Պետական պատվերի շրջանակներում հաշվետվություններով ներկայացված փաստացի
բժշկական ծառայությունները իրականացվել են մասնակիորեն: Անվճար տրվող դեղորայքը, համաձայն
հարցման արդյունքների, մասնակիորեն չի տրվում կամ ամբողջությամբ չի տրվում բնակիչներին պահանջն
առաջանալու դեպքում:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները
վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց ՓԲԸ-ի տնօրենին՝

ա/ Կիրառել ՀՀ առողջապահության նախարարի 13.09.2013թ. 47-Ա հրամանի պահանջները և ապահովել
հաշվառված բնակիչներին այցելություններ առնվազն տարեկան մեկ անգամ, իրականացնել պարտադիր
սկրինինգներ և կատարել համապատասխան գրանցում քարտերում:

բ/ Թույլ չտալ պետական պատվերի շրջանակներում բժշկական ծառայությունների հավելագրումներ:

գ/ Ապահովել հաշվառված բնակիչների քարտերի ամբողջական առկայություն: Քարտերի պահպանումը,
հաշվառումը և շարժը իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի 24.09.2008թ.-ի թիվ 17-Ն հրամանի
պահանջներին համապատասխան:

դ/ Ճշգրտել Արփի համայնքի սպասարկվող բնակիչների փաստացի թվաքանակը և հաշվառել բնակիչների
բժշկական սպասարկման տեղեկատվական համակարգում:

ե/ Դեղորայքի բաշխման պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ կիրառել կարգապահական
տույժ:


Առաջարկությունների կատարման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն մեկ ամսյա
պարբերականությամբ:

Առաջարկել Ներքին աուդիտի կոմիտեին՝

ա/ Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի 16-րդ կետի պահանջների
առաջարկում ենք փաստացի բժշկական ծառայությունները հավելագրելու, հաշվառված բնակիչների
քարտերի ամբողջական առկայությունը չապահովելու համար ընկերության տնօրենի նկատմամբ կիրառել
կարգապահական տույժ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝
Ներքին աուդիտորներ՝

«Աղավնաձորի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի տնօրենի՝
Հաշվապահ՝


Վ. Կարապետյան
Ն. Կարապետյան
Հ. Ավետիսյան
Լ. Հարությունյան
Ա. Կոստանյան